ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 92-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին:
4) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքում ապատեղեկատվության դեմ պայքարի տեղական քաղաքականությունը հաստատելու մասին:
6) 0.97607 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
7) 0.05417 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
8) 0.065 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00404 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

10) «Դավիթ Սմբատյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Մալիշկա բնակավայրի տարածքում նախատեսվող գործունեությանը համաձայնություն տրամադրելու մասին:

11) 01.07.2025 թվականի դրությամբ Եղեգնաձոր համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -11
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԵՐՈՒԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 93-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ, 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N 16-Ն հրամանի հավելված 1-ի 18-րդ կետի պահանջը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ տողին (տող 1393) ավելացնել 399 900 (երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ և այն նպատակաուղղել 09.01.01 (նախադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի մարտի 19-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին տարակարգ շնորհելու մասին» N 694-Ա/2 հրամանի համաձայն «Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի» մեթոդիստ Ասյա Դովլաթյանին սահմանած չափով հավելավճար տրամադրելու նպատակով.

2) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում նախատեսված ենթածրագրերով աջակցությունների տրամադրման նպատակով՝ 10.07.01 (սոցիալական հատկացումներ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) պակասեցնել 4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ոլորտի տնտեսական դասակարգման՝

ա. 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ. 4261 (գրասենյակային նյութեր և հագուստ) հոդվածին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

գ. 4266 (առողջապահական և լաբորատոր նյութեր) հոդվածին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

դ. 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածին՝ 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

ե. 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

զ. 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -11
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱՐԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՁԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 94-Լ

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՁԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 94 Լ որոշման
հավ.դրամ

Եկամտային մաս.

| Եկամտատեսակ | Նախատեսված | Կատարողական | Կատ. տոկոս |
|---|---|---|---|
| | /2-րդ եռամսյակ/ | /2-րդ եռամսյակ/ | |
| Անշարժ գույքի հարկ | 12990 | 16241 | 125.0 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներից | 36500 | 50715.2 | 138.9 |
| Տեղական տուրքեր | 4178.8 | 4716.6 | 112.9 |
| Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 5045 | 8459.4 | 167.7 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 331517.4 | 331517.4 | 100.0 |
| Այլ դոտացիաներ | 0 | 0 | 0.0 |
| Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 799.6 | 799.6 | 100.0 |
| տեղական վճար | 6000 | 3508.1 | 58.5 |
| տեղական վճ.՝ծնողական մուծում | 11540 | 12211.5 | 105.8 |
| տեղական վճ.՝ աղբահանություն | 12060 | 12218.3 | 101.3 |
| տեղական վճ.՝ խմելու ջրի վարձավճար | 2760 | 3909.9 | 141.7 |
| Պետական տուրք | 1200 | 1125 | 93.8 |
| Այլ եկամուտներ | 1400 | 23157 | 1654.1 |
| **Ընդամենը** | **425990.8** | **468579** | **110.0** |
| ***Ընդամենը սեփական եկամուտ*** | ***93673.8*** | ***136262*** | ***145.5*** |

| Ծախսային մաս | Նախատեսված | Կատարողական | Կատ. տոկոս |
|---|---|---|---|
| | /2-րդ եռամսյակ/ | /2-րդ եռամսյակ/ | |
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 87413.6 | 87413.6 | 100.0 |
| Պարգևատրումներ | 3680.8 | 3680.8 | 100.0 |
| Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 0 | 0 | 0.0 |
| Էներգետիկ ծառայություններ | 12404.3 | 12404.3 | 100.0 |
| Կոմունալ ծառայություններ | 32198.5 | 32198.5 | 100.0 |
| Կապի ծառայություններ | 719.5 | 719.5 | 100.0 |
| Ապահովագրական ծախսեր | 321.5 | 321.5 | 100.0 |
| Գործողումների և շրջագայությունների ծախսեր | 473.8 | 473.8 | 100.0 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում | 4429.7 | 4429.7 | 100.0 |
| Մասնագիտական ծառայություններ | 4263.1 | 4263.1 | 100.0 |
| Ընթացիկ նորոգում և պահպանում | 277 | 277 | 100.0 |
| Նյութեր | 4770.5 | 4770.5 | 100.0 |
| Դրամաշնորհներ | 6228.1 | 6228.1 | 100.0 |
| Սուբսիդիաներ | 225275.1 | 225275.1 | 100.0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 450 | 450 | 100.0 |
| Այլ ծախսեր | 789.5 | 789.5 | 100.0 |
| Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն | 88060.5 | 88060.5 | 100.0 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 1000 | 1000 | 100.0 |
| Հողի իրացումից մուտքեր | 0 | -107209.3 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 95-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Լ որոշմամբ հաստատված համայնքային սոցիալական ծրագիրը (X գլուխ, 3-րդ պարբերություն) և ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

Հավելված

Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 95-Ա որոշման

**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՆ՝ ԸՍՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ**

| ՀՀ | Ազգանուն, անուն | Բնակավայր | Հասցե | Տրամադրվող հատուցման չափը ՀՀ դրամով արտահայտված |
|---|---|---|---|---|
| 1 | Հովիկ Հակոբյան | Գետափ | Փողոց 21, նրբ 1, տուն 2 | 200 000 |
| 2 | Արթուր Սարգսյան | Եղեգնաձոր | Սպանդարյան 23 | 200 000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 96-Ա

## ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքում ապատեղեկատվության դեմ պայքարի տեղական քաղաքականությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱԼԵՔ
ՆԱՁԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

Հավելված
Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 96-Ա որոշման

# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 Թ.

# ՆԱԽԱԲԱՆ

- ***Հիմնախնդիր, առկա իրավիճակ***

Ապատեղեկատվությունն իր բոլոր տեսակներով և դրսևորումներով այլևս դարձել է գլոբալ մարտահրավեր և սպառնալիք պետությունների և հասարակությունների համար: Վերջին տարիներին, պայմանավորված Հայաստանի անվտանգային և ներքին ժողովրդավարական խնդրահարույց գործընթացներով, ապատեղեկատվական հոսքերը կիրառվում են տարբեր նպատակներով: Դրանք օգտագործվում են թե՛ ներքաղաքական նպատակահարմարությունից ելնելով, թե՛ հասարակության տարբեր խմբերի թիրախավորելու և թե՛ Հայաստանի Հանրապետության ներքին դիմադրողականությունը թուլացնելու նպատակով տեղեկատվական պատերազմների տրամաբանության մեջ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ապատեղեկատվությունը որպես գլոբալ մարտահրավեր առանձնացվում է արդեն իսկ տարբեր միջազգային դերակատարների և պետությունների կողմից: Համաշխարհային ռիսկերի զեկույցում (2024թ.) արհեստական բանակությամբ ստեղծված ապատեղեկատվությունը կարճաժամկետ ռիսկերի դրսևորման հարթության վրա համարվում է գլխավոր սպառնալիքը:

Նման պայմաններում կարևոր է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների ուժերի համախմբմամբ ունենալ քաղաքականություններ, որոնք մատնանշում են այն հիմնական ուղղություններն ու ոլորտները, որտեղ պատասխանատու մարմիններն ունեն անելիք: Առաջին նման փորձը տեղի է ունեցել միայն վերջերս, երբ ընդունվեց «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը 2024-2026»:

Ներկայումս, ՀՀ-ում ապատեղեկատվության դեմ պայքարը չունի շատ լուրջ հաջողություններ: Ասվածի վառ ապացույցը տարբեր ուսումնասիրություններով ձեռք բերված տվյալներն են, որոնք փաստում են, որ հայ հանրության շրջանում ապատեղեկատվության բացահայտման, հակազդման հմտությունները գտնվում են ոչ

բավարար մակարդակի վրա: Մասնավորապես, ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի՝ Հայաստանում 2020թ. անցկացրած հետազոտության համաձայն՝ հարցվածների 48%-ն ամեն օր հանդիպում է ապատեղեկատվության և մոլորեցնող լուրերի: Իսկ 2021 թվականի Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի ուսումնասիրության համաձայն՝ մարդկանց 80%-ը ոչ մի քայլ չի ձեռնարկում կասկածելի տեղեկության հանդիպելիս:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ չնայած նման պատկերին, Հայաստանում կան փոքրաթիվ կազմակերպություններ, որոնք խթանում են մեդիակրթությունը, նպաստում՝ ապատեղեկատվության բացահայտմանն ու նման դեպքերի հանրայնացմանը: Իհարկե, խոսքը այս դեպքում սահմանափակ ռեսուրսներ ունեցող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների և փաստերի ստուգման հարթակների մասին է:

- ***Հայեցակարգի ռազմավարական ուղղությունները***

- *Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում,*
- *Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև համագործակցության խթանում,*
- *Եղեգնաձոր համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում:*

- ***Հայեցակարգի ռազմավարական նպատակները***

- *Զարգացնել Եղեգնաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների կարողունակությունները ապատեղեկատվության դեմ պայքարի և մեդիագրագիտության ոլորտում,*
- *Խթանել Եղեգնաձոր համայնքում մասնավոր ոլորտի ներկայացուցիչների և համայնքապետարանի միջև փոխգործակցությունը ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգից բխող գործողություններում,*
- *Բարձրացնել հասարակական դիմակայունությունը Եղեգնաձոր համայնքում ապատեղեկատվության դեմ պայքարից բխող գործողություններում:*

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1**:

Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում

- Շարունակական վերապատրաստումներ ՏԻՄ ներկայացուցիչներ և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների շրջանում,
- Եղեգնաձոր համայնքապետարանի և դրան ենթակա մարմինների ռազմավարական հաղորդակցության բարելավում,
- Եղեգնաձոր համայնքապետարանի և դրան ենթակա մարմինների թափանցիկության և հաշվետվողականության ստանդարտների մշակում և ներդնում:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2**:

Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև համագործակցության խթանում

- Մասնավոր հատվածի ռեսուրսների քարտեզագրում, ներգրավում և մոբիլիզացիա
- Տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3**:

Եղեգնաձոր համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում

- Քաղաքացիական կրթություն և ոչ ֆորմալ կրթական ծառայություններ,
- Հանրակրթական հաստատություններում վերապատրաստումներ և մեդիագրագիտության թեմաների ինտեգրում:

## ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| Ռազմավարական ուղղություն | Գործողություն | Ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|
| 1. Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում | Իրականացնել վերապատրաստումներ ՏԻՄ ներկայացուցիչների և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների շրջանում ապատեղեկատվության, դրա տեսակների, մեդիագրագիտության գործիքներ, արհեստական բանականության, ռազմավարական հաղորդակցություն թեմաների շուրջ | Յուրաքանչյուր տարի իրականացնել առնվազն 5 վերապատրաստում՝ ներգրավելով 50 ՏԻՄ և ՀՈԱԿ ներկայացուցիչների: |
| | Մշակել Եղեգնաձոր համայնքի ռազմավարական հաղորդակցության պլան | Համայնքի ավագանու որոշմամբ ընդունել համայնքի ռազմավարական հաղորդակցության պլանը, որը կարող է թարմացվել 5 տարին մեկ կամ ըստ անհրաժեշտության: |
| | Մշակել համայնքապետարանի հաղորդակցության ինքնագնահատման ստանդարտներ, որը կհանդիսանա ՏԻՄ-երի կողմից սեփական հաղորդակացության շարունակական բարելավման ուղեցույցը: | Համայնքի ավագանու որոշմամբ ընդունել հաղորդակցության ինքնագնահատման ստանդարտներ, որը կարող է թարմացվել 5 տարին մեկ կամ ըստ անհրաժեշտության: |
| 2. Եղեգնաձոր համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև | Ստեղծել համագործակցության հարթակ, որը կմիավորի Եղեգնաձոր համայնքում գործունեություն ծավալող մասնավոր, հասարակական հատվածի ակտիվ ներկայացուցիչներին | ՏԻՄ-Մասնավոր հատված-ՔՀԿ հատված համագործակցության փոխընդունելի 1 հարթակի ստեղծում: |
| | Քարտեզագրել մասնավոր և հասարակական հատվածում առկա ներուժը ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացում | Մեկ միասնական տվյալների բազա, որում արտացոլված են համայնքի հասարակական և մասնավոր հատվածի ներուժը ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացում: |

| | | |
|---|---|---|
| համագործակցությա<br>ն խթանում | Մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ իրականացնել տարբեր բնույթի իրազեկման արշավներ հասարակության կարիքներին համապատասխան զգայուն թեմաների շուրջ | Առնվազն 1 իրազեկման արշավ մեկ տարվա ընթացքում |
| | Մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ իրականացնել հասարակության դիմակայունության բարձրացմանն ուղղված դասընթացներ, վերապատրաստումներ, հոլովակների շարք մեդիագրագիտության վերաբերյալ և այլն: | Առնվազն 6 դասընթաց մեկ տարվա ընթացքում, որը կներգրավվի առնվազն 200 մասնակցի |
| 3. Եղեգնաձոր համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում | Ապատեղեկատվության դեմ պայքարի, մեդիագրագիտության և հարակից թեմաներով քաղաքացիական կրթության փոքր դրամաշնորհների հայտարարում և տրամադրում: | Տրամադրել առնվազն 3 փոքր դրամաշնորհ համայնքում գործող ՀԿ-ներին քաղաքացիական կրթության ծառայություններ տրամադրելու նպատակով: |
| | Հանրակրթական հաստատություններում հայտարարել տարբեր բնույթի մրցույթներ աշակերտների և ուսուցիչների շրջանում ապատեղեկատվության դեմ պայքարելու դիմակայունության բարձրացման նպատակով (օրինակ՝ արվեստի մրցույթներ, քննարկումներ, թեմատիկ շարադրություններ, կարճամետրաժ հոլովակներ և այլն): | Կազմակերպել առնվազն նման 5 մրցույթ մեկ տարվա ընթացքում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 97-Ա

## 0.97607 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Բագրատ Խաչատրյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Բագրատ Արմենակի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.97607 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 05032025-10-0001, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0309-0119) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման՝ բիզնես գործունեություն ծավալելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 98-Ա

## 0.05417 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Արմեն Մկրտչյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Արմեն Լազրի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.14618 հա վարելահող հողատեսքից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 05022025-10-0013, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0104-0055) 0.05417 հա-ի նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման՝ հյուրատուն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 99-Ա

## 0.065 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Վահե Փանոսյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վահե Սամվելի Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.065 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 29052025-10-0020, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0309-0123) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման՝ սրճարան կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 100-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00404 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Ռուզաննա Զաքարյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Նարեկացու փողոց 3/10 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության 0.00404 հա մակերեսով բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0051-0001-ից) ավտոտնակով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Ռուզաննա Չուբարի Զաքարյանին:

2. Վաճառքի գին սահմանել 179 450 (մեկ հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ (կադաստրային արժեքի 100 տոկոսը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -10
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

Դեմ -0

Ձեռնպահ -1
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 101-Ա

## «ԴԱՎԻԹ ՍՄԲԱՏՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱԼԻՇԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 23-ին Մալիշկա բնակավայրում անցկացված հանրային լսման արձանագրությունը և այն հանգամանքը, որ հանրային լսման արդյունքում բնակչությունը նախատեսվող գործունեությանը տվել է դրական կարծիք.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում «Դավիթ Սմբատյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեությանը, համաձայն որի նախատեսվում է Մալիշկա բնակավայրում «Դավիթ Սմբատյան» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Գագիկ Սմբատյանին պատկանող 1.7 հա տարածքում («Այդալիկ») իրականացվել Վայոցսար բազալտների երևակման երկրաբանական ուսումնասիրություն, օգտակար հանածոների արդյունահանում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թվականի N 102-Ա

## 01.07.2025 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն 01.07.2025 թվականի դրությամբ Եղեգնաձոր համայնքի հողերի հաշվեկշռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱՁԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
ք. Եղեգնաձոր